ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 7
4. ՓՈԽԱՐԺԵՔ 8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 9
   5.1. Բյուջեի եկամուտներ 9
   5.2. Բյուջեի ծախսեր 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Պետական պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ և վարկեր 14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16
8. ԱՄՓՈՓՈՒՄ 17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



Տնտեսական սահմանափակումների վերացումից հետո տնտեսության անկման բարձր տեմպերը պահպանվել են: Թեև հունիսին տնտեսական ակտիվության ցուցանիշի 12-ամսյա անկման տեմպը դանդաղել է՝ դառնալով -7.5% մայիսի -12.8%-ի դիմաց, սակայն կուտակային տնտեսական անկումը խորացել է: Հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ի աճը հունվար-մայիսի համեմատ նվազել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 4.7%:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար -4.1, -1.5 և -1.2 տոկոսային կետերով: Արդյունաբերությունն ունեցել է դրական նպաստում՝ 0.4 տոկոսային կետի չափով՝ առավելապես հանքարդյունաբերության աճի շնորհիվ:

Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական ակտիվությունը ընթացիկ տարվա առաջին կիսամյակում աճել է 1.7%-ով՝ ընդհանուր տնտեսական ակտիվությանն ունենալով 0.2 տոկոսային կետ դրական նպաստում:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերությունը միակ ոլորտն է, որտեղ վեց ամիսների աճը դեռևս պահպանվում է զրոյից բարձր մակարդակում, ինչն առավելապես պայմանավորված է հանքարդյունաբերության աճով: Հունիսին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 2.4% անկում նախորդ տարվա հունիսի նկատմամբ, սակայն հունվար-հունիս ամիսների ցուցանիշը, մնացել է դրական՝ 1.5%:

Արդյունաբերության ոլորտի դրական միտումները պայմանավորված են հանքարդյունաբերության բարձր աճով: Այսպես, հունվար-մայիս[1] ամիսներին արդյունաբերության աճը կազմել է 2.4%, որին 4.5 տոկոսային կետով նպաստել է հանքարդյունաբերության 25.7% աճը: Մշակող արդյունաբերությունը նույն ժամանակահատվածում գրանցել է 3.4% անկում՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով -2.2 տոկոսային կետով: **Եթե կատարենք պարզ հաշվարկ, կարող ենք ասել, որ հանքարդյունաբերության աճի բացակայության (զրոյական աճի) պայմաններում ընդհանուր արդյունաբերության կիսամյակային աճը կլիներ բացասական՝ -3%, իսկ ՏԱՑ-ը -4.7-ի փոխարեն կլիներ -5.8%[2]:**

«Էլեկտրաէներգիա և գազի մատակարարում» ենթաճյուղը աճել է 3.4%՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.5 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 20.7 տոկոսով՝ ունենալով 0.3 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Ճգնաժամի արդյունքում ամենամեծ անկումն է գրանցվել շինարարության ճյուղում: Ընթացիկ տարվա հունիսին շինարարության ծավալը նախորդ տարվա

[1] Հունվար-հունիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

[2] Հաշվարկում ենթադրվել է, որ հանքարդյունաբերության նպաստումը ընդհանուր արդյունաբերության աճին հունվար-հունիսին նույնպես կազմել է 4.5 տոկոսային կետ: Բացի այդ, հաշվի չեն առնված հանքարդյունաբերության մուլտիպլիկատիվ էֆեկտները, որոնք հաշվի առնելու դեպքում բացասական ազդեցությունը կլիներ ավելի մեծ:

նույն ամսվա նկատմամբ նվազել է 23.3%-ով: Արդյունքում, շինարարության անկումը հունվար-հունիսին կազմել է մոտ -23.4%: Շինարարության անկումը մասամբ պայմանավորված է նաև պետական բյուջեի հաշվին կատարվող շինարարության անկմամբ՝ բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարման արդյունքում, որին կանդրադառնանք ստորև:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում անկման տեմպը փոքր-ինչ դանդաղել է՝ մնալով բավական բարձր մակարդակում: Համավարակը զգալի բացասական ազդեցություն է ունեցել ծառայությունների ոլորտի վրա, քանի որ ինչպես տնտեսական սահմանափակումները, այնպես էլ պարետատան խիստ պահանջները ամենաշատը վերաբերել են հենց այս ոլորտին: Այդ պատճառով, հունիսին ծառայությունների ոլորտում անկումը դանդաղել է բավականին փոքր չափով՝ ընդամենը 3.5 տոկոսային կետով և կազմել է 15.9%: Հունվար-հունիս ամիսների անկումը կազմել է 6.4%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ վատթարանալով 2.2 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալները հունիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել են 12.4%-ով: Առևտրի ծավալների 12-ամսյա անկումը նույնպես փոքր-ինչ դանդաղել է: Սակայն, ինչպես մյուս ոլորտներում կուտակային անկման տեմպը խորացել է՝ հունվար-հունիսին կազմելով 11.1%՝ նախորդ ամսվա 10.8%-ի փոխարեն:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Արտահանման անկումը զգալիորեն դանդաղել է: Հունիս ամսվա արտահանման ծավալները նախորդ տարվա հունիսի նկատմամբ նվազել են 0.5%-ով, ինչը նախորդ ամսվա 8.4-ի համեմատ զգալի բարելավում է: Արդյունքում հունվար-հունիս ամիսների արտահանման կուտակային նվազումը կազմել է 6.5%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ բարելավելով 1.5 տոկոսային կետով:

Հարկ է նշել, որ արտահանման ցուցանիշները կրկին ենթարկվել են զգալի վերանայումների, ինչի արդյունքում հունվար-փետրվար ամիսների աճը մեծացել է 0.1 տոկոսային կետով, իսկ հունվար-ապրիլ ամիսներինը՝ նույն չափով նվազել:

Հունվար-մայիս ամիսների տվյալներով[3] արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների արտահանման 31.0%, մանածագործական արտադրանքի 39.6% և պատրաստի սննդի արտադրանքի 10.4% կրճատմամբ, որոնք ընդհանուր արտահանման աճին ունեցել են համապատասխանաբար 5.3, 2.9 և 2.4 տոկոսային կետերով բացասական նպաստում:

Արտահանման աճին 5.1 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 19.2% աճը, **որը արտահանման անկման տեմպի դանդաղումն ապահովող հիմնական գործոնն է:**

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալը շարունակում է խոշոր տեմպով անկում գրանցել: Հունիս ամսվա ներմուծման ծավալները նախորդ տարվա հունիսի նկատմամբ նվազել են 15.2%-ով, իսկ կուտակային՝ հունվար-հունիս ամիսների անկումը կազմել է 12.9%՝ նախորդ ամսվա նկատմամբ վատթարանալով 0.6 տոկոսային կետով:

Ներմուծման ցուցանիշները նույնպես վերանայվել են: Այսպես՝ հունվար-մարտ ամիսների ներմուծման անկումը 4.3%-ից դարձել է 4.2%, հունվար-ապրիլ ամիսներինը՝ 10.4%-ից դարձել է 10.3%, իսկ հունվար-մայիս ամիսներինը՝ 12.8%-ից դարձել է 12.3%:

[3] Հունվար-հունիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Հունվար-մայիս ամիսների տվյալներով[4] ներմուծման նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ, բացառությամբ պատրաստի սննդի և հանքահումքային արտադրանքի ներմուծման: Առավել խոշոր բացասական դերակատարում է ունեցել ավտոմեքենաների ներմուծման 59.2% կրճատումը, ինչը ընդհանուր ներմուծման կրճատմանը նպաստել է 5.4 տոկոսային կետով: Զգալի ազդեցություն են ունեցել նաև սարքեր և սարքավորումների (նվազումը՝ 13.0%), թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների (նվազումը՝ 48.3%) և մանածագործական արտադրանքի (նվազումը՝ 27.0%) ներմուծման ծավալների անկումները, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.1, 2.6 և 1.6 տոկոսային կետ:

Ներմուծման ծավալներին դրական նպաստում են ունեցել միայն պատրաստի սննդի 16.5% և հանքահումքային արտադրանքի 3.6% աճերը՝ համապատասխանաբար 1.1 և 0.6 տոկոսային կետով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2020թ. հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.4 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 8.3 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.8 տոկոսով: Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի հաշվարկում (ապրիլից սկսած) ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները, որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ ուղարկել են չվճարվող հարկադիր պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել: Հունվար-ապրիլի և հունվար-մայիսի ճշգրտված ցուցանիշները կներկայացվեն «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-հունիսին» տեղեկատվական ամսական զեկույցում:

[4] Հունվար-հունիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-հունիս, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)







2020 թվականի հունվար-հունիսին ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժևորման տեմպի դանդաղումը շարունակվել է: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-հունիսին ՀՀ դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 0.1%, իսկ Եվրոյի նկատմամբ՝ 2.7%: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ նկատվում է ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացում:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտները նվազել են: Հունվար-հունիս ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 5.5%-ով: Հարկային եկամուտները և պետական տուրքերը նվազել են մոտ 4.6%-ով, ինչը 6.8 տոկոսային կետով ավելի ցածր է քան հունվար-մայիս ամիսների աճը: Նույն ժամանակահատվածում պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները նվազել են 64.0%-ով, իսկ այլ եկամուտները՝ 11.5%-ով:

Հարկային եկամուտները հունիս ամսին նախորդ տարվա հունիսի նկատմամբ նվազել են 32.1%-ով: Սակայն, եթե հաշվի առնենք, որ բոլոր ճյուղերում 12-ամսյա ՏԱՑ-ի անկումը հունիսին դանդաղել է, կարելի էր ակնկալել նաև հարկային եկամուտների անկման դանդաղում: Այս պատկերը կապված է նաև շահութահարկի փոփոխություններով: Նշենք, որ հունիս ամսին իրականացվել է հարկային օրենսգրքում փոփոխություններ, որոնց համաձայն վերանայվել է շահութահարկի կանխավճարների հաշվարկման համակարգը, ինչպես նաև սահմանվել է, որ 2020թ. առաջին կիսամյակում շահութահարկի կանխավճարներ չեն իրականացվելու:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %



Օրենսդրական փոփոխությունն արդեն իսկ արտացոլվել է վիճակագրությունում: Այսպես, 2020թ. հունվար-հունիս ամիսներին շահութահարկի գծով մուտքերը նվազել են 14.3%-ով, ինչը ընդհանուր հարկային եկամուտների աճի վրա ունեցել է 2.3 տոկոսային կետով բացասական ազդեցություն:

Հարկային եկամուտների նվազմանը նպաստել են նաև ավելացված արժեքի հարկի 7.3% նվազումը և մաքսատուրքերի 26.8% նվազումը, որոնց նպաստումները ընդհանուր հարկային եկամուտների անկմանը կազմել է համապատասխանաբար -2.4 և -1.5 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-մայիս		Հունվար-հունիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**2.2**	**2.2**	**-4.6**	**-4.6**
ԱԱՀ	-3.5	-1.2	-7.3	-2.4
Շահութահարկ	14.8	2.1	-14.3	-2.3
Եկամտային հարկ	4.9	1.4	2.2	0.6
Ակցիզային հարկ	4.9	0.4	5.5	0.4
Շրջանառության հարկ	9.6	0.2	10.7	0.2
Արտոնագրային հարկ	-98.6	-0.3	-98.7	-0.3

Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	24.7	0.6	18.3	0.6
Մաքսատուրք	-27.2	-1.6	-26.8	-1.5
Սոցիալական վճար	16.7	0.2	15.3	0.2
Այլ հարկային եկամուտներ	22.9	0.3	5.9	0.1
Պետական տուրք	-3.4	-0.1	-12.8	-0.3

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Եկամուտների նվազման պայմաններում պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է արագանալ: Այսպես, հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 20.2 տոկոսով՝ կազմելով 765.5 մլրդ դրամ՝ նախորդ ամսվա 19.8% աճի փոխարեն: Այդ թվում, ընթացիկ ծախսերն աճել են 17.4 տոկոսով, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) աճել են մոտ 94.5%՝ կազմելով 45.8 մլրդ դրամ:

Պետական բյուջեի ծախսերի աճը կապված է համավարակի հետևանքների չեզոքացման համար կառավարության կողմից իրականացվող տնտեսական և սոցիալական միջոցառումների գծով ծախսերով: Սակայն, նույնիսկ զգալի աճերի պայմաններում, պետական բյուջեի ծախսերը զգալի չափով թերակատարվել են: Իհարկե դեռևս չի հրապարակվել 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանը, սակայն նույնիսկ հաստատված բյուջեի պլանի հետ համեմատ՝ **ընդհանուր ծախսերը թերակատարվել են 11.5%-ով, ընթացիկ ծախսերը՝ 4.4%-ով, իսկ**

կապիտալ ծախսերը՝ 59.0%-ով: Սկսած 2018-ից, սա արդեն երրորդ տարին է, որ կառավարությունը պատշաճ կերպով չի իրականացնում նախատեսված ծախսերը: Հատկապես ճգնաժամային իրավիճակում, կապիտալ ծախսերի նման ծավալով թերակատարումը զգալիորեն նվազեցնում է հետագայում տնտեսության վերականգնման պոտենցիալը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվար-հունիս ամիսներին իրականացված մեծ ծախսերի և ձևավորված ցածր եկամուտների արդյունքում պետական բյուջեի պակասուրդը մեծացել է: Պետական բյուջեի ծախսերի առաջանցիկ աճի հետևանքով ձևավորվել է 48.8 մլրդ դրամ պակասուրդ: Սակայն հարկ է նշել, որ պակասուրդի պլանը նույնպես չի կատարվել: Հունվար-հունիս ամիսների համար պլանավորվել էր 56.6 մլրդ դրամ պակասուրդ: Եթե պակասուրդի թերակատարումը լիներ ընթացիկ ծախսերի հաշվին, ապա դա կհամապատասխաներ ներկա իրավիճակի մարտահրավերներին և կարող էր մեկնաբանվել որպես պետական ռեսուրսի խնայողաբար օգտագործում, սակայն քանի որ դրա հիմնական պատճառներից է կապիտալ ծախսերի թերակատարումը, ապա նախատեսվածից փոքր պակասուրդը կունենա բացասական հետևանքներ տնտեսական ակտիվության համար:

5.4. Պետական պարտք

2020թ. հունիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,721.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունիսի նկատմամբ աճելով 11.5%-ով: Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքը հունիսի վերջի դրությամբ կազմել է 7,246.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 13.2%-ով: Աճը տեղի է

ունեցել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 11.4% և 19.5%: Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքն աճել է 27.1 մլն ԱՄՆ դոլարով (7.8 մլն դոլարով՝ արտաքին և 19.3 մլն դոլարով՝ ներքին պարտքի աճի հաշվին) կամ 0.38%-ով:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



Հարկ է նշել, որ կառավարության պարտքի՝ մայիս ամսվա ցուցանիշները վերանայվել են, ինչի արդյունքում 12-ամսյա աճի ցուցանիշը փոխվել է՝ 8.7%-ից դառնալով 13.2%:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Տնտեսական անկման խորացմանը զուգահեռ փոքր-ինչ արագացել է գնաճի տեմպը: Սկսած տարվա սկզբից՝ ՀՀ ԿԲ-ն վարում է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ պարբերաբար նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Վերջին երեք ամիսներին գնաճի տեմպը դրսևորում է արագացման միտում, սակայն դեռևս մնում է բավականին ցածր՝ 1.7% մակարդակում: Ընթացիկ տարվա ընթացքում, ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքն ընդհանուր առմամբ 1.0 տոկոսային կետով, սակայն գնաճը դեռևս չի մոտեցել ԿԲ թիրախին:

6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. հունվար-հունիս ամիսներին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը փոքր-ինչ արագացել է և կազմել 11.8 տոկոս:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումները ավանդների 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



Ավանդների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսություններից և ոչ ռեզիդենտներից ներգրավվող ավանդների աճով, որոնց նպաստումները ընդհանուր ավանդների աճին կազմել է համապատասխանաբար 5.1 և 3.3 տոկոսայն կետ:

Վարկերի աճի տեմպը ունի արագացման միտում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 18.2 տոկոսով՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճելով 0.4 տոկոսային կետով: Վարկերի աճի արագացումը պայմանավորված է նաև կառավարության տնտեսական օժանդակության ծրագրերի իրականացմամբ, սակայն, քանի որ վերջիններիս վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը չի հրապարակվում, հնարավոր չէ գնահատել դրանց ազդեցության չափը:

Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



Վարկերի աճին հիմնականում նպաստել են սպառողական, հիպոթեքային և ծառայությունների ոլորտին տրամադրվող վարկերը՝ համապատասխանաբար 5.1, 3.5 և 3.0 տոկոսային կետերով:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տնտեսական անկման խորացող տեմպերին զուգընթաց, կորոնավիրուսի դեպքերը շարունակում են աճել: Մայիսի վերջի դրությամբ հաստատված դեպքերը կազմում էին 9282, իսկ հունիսի վերջին դրանք հասան 25542-ի: Հուլիսի 27-ի դրությամբ գրանցված դեպքերը կազմում են 37390: Առաջին հայացքից տեմպի դանդաղում կարելի է արձանագրել, սակայն դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ իրականացվող թեստավորման օրական քանակը չի աճում (արվում է մոտ 1800-2000 թեստ):

Փոխարենը մտահոգիչ է մահվան դեպքերի աճը: Եթե հունիսի սկզբում վիրուսից մահացել էր 139 մարդ, ապա հուլիսի սկզբում մահվան դեպքերը կազմել են 453, իսկ հուլիսի 27-ի դրությամբ՝ 711: Այսինքն՝ հունիսին մահվան դեպքերն աճել են 3.3 անգամ, իսկ հուլիսին (մինչև 27-ը)՝ մոտ 1.6 անգամ:

Գծապատկեր 19. Կորոնավիրուսի վարակման և մահացության դեպքերը



1 000 000 բնակչի հաշվով դեպքերի թվով Հայաստանը շարունակում է մնալ աշխարհում 11-րդ տեղում: Անորոշության մթնոլորտը դեռևս պահպանվում է՝ բացասաբար ազդելով տնտեսական ակտիվության վրա և նվազեցնելով տնտեսության վերականգնման տեմպը:

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Հունիս ամսին տնտեսության անկումը փոքր-ինչ դանդաղել է, սակայն վերականգնման միտումներ դեռևս չեն նկատվում:** Ամենամեծ անկում ապրող ոլորտը շարունակել է մնալ շինարարությունը՝ հունվար-հունիս ամիսներին ունենալով 23.4% անկում: Վերջինիս զգալի չափով նպաստել է նաև կառավարության կապիտալ ծախսերի թերակատարումը: Համավարակի հետևանքով զգալի անկում գրանցած մյուս ճյուղերում հունիս ամսին, թեև գրանցվել է որոշակի անկման տեմպի դանդաղում, սակայն դեռևս դրական ցուցանիշներ չեն արձանագրվել:

2. **Հանքարդյունաբերությունը նպաստում է ինչպես տնտեսական ակտիվության, այնպես էլ արտահանման ծավալների անկման մեղմմանը:** 2018-2019թթ. բարձր տնտեսական աճի պայմաններում Կառավարությանը չհաջողվեց նշանակալի կառուցվածքային փոփոխություններ իրականացնել տնտեսությունում և մեծացնել բարձր տեխնոլոգիական արտադրության ճյուղերի դերը, սակայն իր քաղաքականությամբ վնաս հասցրեց հանքարդյունաբերությանը: Ճգնաժամային իրավիճակում ակնհայտ է դառնում, որ հանքարդյունաբերությունը կարևոր դերակատարում ունի տնտեսությունում, հետևաբար, պետք է վերանայել մոտեցումը և փորձել տնտեսության մյուս հատվածները զարգացնել հանքարդյունաբերությանը զգուգահեռ, այլ ոչ թե դրա հաշվին:

3. **Կորոնավիրուսով վարակման նոր դեպքերը չեն նվազում, և Հայաստանը շարունակում է պահպանել «առաջատար» դիրքերը աշխարհում ամենաշատ վարակվածների թվով:** Ինչպես ապրիլ ամսվա խիստ սահմանափակումները (որոնք խոշոր վնաս հասցրեցին տնտեսությանը), այնպես էլ մայիսին և հունիսին իրականացված կառավարության գործողությունները չեն զսպել վարակի տարածումը, ինչի արդյունքում կորոնավիրուսով վարակման հաստատված դեպքերի քանակը հասել է մտահոգիչ մակարդակների: Արդեն երկար ժամանակ է, ՀՀ-ն զբաղեցնում է աշխարհում 11-րդ տեղը 1 000 000 բնակչի հաշվով գրանցված ընդհանուր դեպքերի թվով, սակայն վիրուսի դեմ պայքարի շրջանակում կառավարության մոտեցումները չեն փոխվում, և ոչ մի նոր լուծում չի առաջարկվում: Վերջինս մեծացնում է անորոշությունը տնտեսությունում՝ բացասաբար ազդելով տնտեսական ակտիվության վրա, նվազեցնելով ներդրումները և տնտեսության վերականգնման տեմպը:

4. **Կառավարությունը շարունակում է կապիտալ ծախսերի թերակատարումը:** Կապիտալ ծախսերը չեն իրականացվում սահմանված պլանին համապատասխան, ինչը լրացուցիչ զսպում է տնտեսական ակտիվությունը: Արդեն երրորդ տարին է, որ շարունակվում է պետական բյուջեի ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը՝ վնասելով հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակների իրագործմանը: Հաշվի առնելով նաև ճգնաժամային իրավիճակը՝ կապիտալ ծախսերի թերակատարումը չունի ոչ մի արդարացում: Սա ոչ միայն նշանակում է կարճաժամկետում շինարարության անկում, ենթակառուցվածքների մաշվածք և կորուստ, չբացված աշխատատեղեր, այլև բացասաբար է անդրադառնալու վերականգնման փուլում տնտեսական աճի տեմպի և մասնավոր ներդրումների ծավալի վրա՝ հանգեցնելով պետական պարտքի մակարդակի անկայուն աճին (ցածր տնտեսական աճի և պարտքի անվանական ծավալի աճի պատճառով):

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*